ւաբար քրդերի և ասորիների վերայ. դա մի բնական դաշնակցութիւն է, որովհետև հայոց խնդիրը, ասում էր Հիւսէյին խանը, միևնոյն քրդերի և ասորիների խնդիրն է, որքան որ հայերը քրդերի և ասորիների զարգացման համար աշխատեն, այնքան էլ իւրեանց գործին կ'օգնեն։

Խանը իւր մտքերի մէջ աւելի շատ առաջ գնաց, որքան ես կարծում էի։ Քրդերի և ասորիների մէջ ուսումնարաններ բացանելը ուղղակի հայոց պարտականութիւնն էր համարում նա։

Երբ որ խանը այսպէս խօսում էր, ես տառապում էի, իմ յիշողութեանս մէջ պատկերանում էին մեր ուսումնարանները իւրեանց հոգաբարձուներով և ուսուցիչներով։

Ես ճանապարհորդել եմ, տեսել եմ. ես ինքս ուսուցչութիւն եմ արել, չորս տարի Ագուլիսում, մի տարի Տփխիսում, մի տարի Շուշում։ Ես մեր ուսումնարաններին ծանօթ եմ...Ճշմարիտ էր ասում խանը. մեր պարտքն էր բարոյապէս կրթել մեզ հետ դարերով ապրող, շահերով կապված մանր ազգերին ասորիներին, քրդերին, եզիդիներին, Գարագոյունցոց և այլն։ Բայց խանը չը գիտէր մեր դպրոցների գաղտնիքը, կամ մեր մէջ դպրոցներ որքան տարածուած են, կամ որքան արժանի են դպրոց կոչուելու, ի՞նչ են պատրաստում ապագայի համար։ Արտաքին մասը